ժարձակութիւնն, և առաւելեալ կարգաւորութեամբ՝ իշխանութեամբ՝ անուամբ և շինուածովք։

Աշոտ երկրորդ՝ որդի Սմբատայ՝ իշխեաց ամս Ե։ Սա կոչեցաւ Մսակեր։ Եւ Խալիփայն Ջ'աֆար՝ որ շինօղն էր Պաղտատու, առաքեաց զզօրսն իւր և ետ տանել առ ինքն զԱշոտ։ Եւ շատ հնարիւք և տանջանօք ոչ կարաց ուրացուցանել զնա 'ի հաւատոյն Քրիստոսի. վասնորոյ եբարձ զնա 'ի կենաց՝ վկայական մահուամբ։

Սմբատ երկրորդ՝ որդի Աշոտոյ նահատակի՝ եկաց իշխանաց Իշխան ամս ԻԵ։ Եւ Ջ'աֆարն երկրորդ՝ որ էր զօրագլուխ, կալաւ զՍմբատ և ստիպէր ուրանալ զՔրիստոս, և տարաւ առ Խալիփայն։ Եւ անդ եւս իբրև ո՛չ ուրացաւ, յետ բազում դառնագոյն տանջանաց՝ փայտ քերեալ և 'ի նստոյ տեղին ստէպ ստէպ մխէին և հանէին։ Եւ այնպէս խստագոյն տանջանօք

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան